


Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր



Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա. Վահագնա Հայրապետի զահակալութեան տասնմէկերորդ տարեդարձին տօթիւ, Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հօր զոգմէ զրկուած է Հետեւեալ Հեռագիրը.

14 Հոկտ. 1966

Արքայական Պալատ,
Ամման.

1 Հոկտ. 1966

Ն. Ս. Օ. Տ. Տ.
Վաւգէն Առաջին,
Կաթողիկոս Ամենայն Հայոց,
Ս. Էջմիածին.

Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Հիւսիսային շրջանի Ամենապատուութեան կը փոխանցեմ Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորի շնորհակալութիւնները այն ազնիւ զգացումներուն համար, զորս արտայայտած էիք Ն. Արքայական Մեծութիւն իշխան Ֆայսալի ծննդեան տարեդարձին առիթով: Ձերդ Ամենապատուութեան կը մաղթեմ երջանիկ օրեր եւ յաջողութիւն:

ԱՐՔՈՒՆԻ ԳԻՒԱՆԱՊԵՏ

Ն. Վահագնալութեան Հիւսէյն Թագաւորի ծննդեան տարեդարձին առթիւ, Արքայական Պալատի եւ Պատրիարքարանի միջեւ փոխանակուած են Հետեւեալ Հեռագիրները.

14 Նոյ. 1966

Ն. Վեհափառութիւն
Հիւսէյն Թագաւոր,
Ամման.

11 Հոկտ. 1966

Ն. Վեհափառութիւն
Հիւսէյն Թագաւոր,
Ամման.

Ն. Ա. Մեծութիւն իշխան Ֆայսալի ծննդեան տարեդարձին ուրախ առիթով, Ձ Վեհափառութեան կը փոխանցեմ մեր, ինչպէս նաեւ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յարդանանի Հայ համայնքին շնորհաւորութիւնները, եւ Ն. Արքայական Մեծութեան կը մաղթեմք քաջաջողութիւն՝ Ձերդ Վեհափառութեան հովանիին ներքեւ:

Ձերդ Վեհափառութեան ծննդեան տարեդարձին բարեբախտիկ առթիւ, մեր կողմէ, ինչպէս նաեւ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յարդանանի Հայ համայնքին անուով խմորիսարար կը ներկայացնեմք մեր ամենէն անկեղծ շնորհաւորութիւնները, եւ կ'աղօթեմք առ Աստուած որ Ձերդ Վեհափառութեան շնորհէ երկար կեանք եւ մշտապէս յաջողութիւն:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ.

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ.

19 Նոյ. 1966

Արաբական Ջարթօնքի տօնին առթիւ, Ն. Ամե-
նապատուութիւն Պատրիարք Ս. Հօր կողմէ յղուած
է Հետեւեալ Հեռագիրը.

Արքայական Պալատ,
Լիւմառն.

Նորին Ամենապատուութիւն
Ֆ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրութեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Մեծապէս շնորհակալ եմք այն շնոր-
հաւորութիւններուն համար, զորս հեռագ-
րով յայտնած էիք մեր ծննդեան տարեդար-
օին առիթով: Ձերդ Ամենապատուութեան
կը մագթեմք յաջողութիւն եւ քաջազու-
թիւն:

ՀԻԻՍԷՅՆ.

22 Նոյ. 1966

Ն. Վեհափառութիւն
Հիւսէյն Թագաւոր,
Լիւմառն.

Արաբական Ջարթօնքի տօնին առիթով,
պատիւն ունիմք մեր, Երուսաղէմի Հայ
Պատրիարքութեան եւ Յորդանանի Հայ Կա-
մայնիին կողմէ շնորհաւարել Ձերդ Վեհա-
փառութիւնը, ցանկալ յարատեւ յաջողու-
թիւն եւ յաղթանակ, եւ մեր սիրելի Յոր-
դանանի՝ բարօրութիւն եւ առեւացում:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

